ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 924 - Ա

«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆՔ ՓՈՔՐ ԽՄԲԱՅԻՆ ՏՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5,928,249 դրամ արժողությամբ «Ջերմիկ անկյուն համայնքահենք փոքր խմբային տներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 01242562) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են «Ջերմիկ անկյուն համայնքահենք փոքր խմբային տներ» ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2018 թվականի հունիսի 21-ին կնքված՝ N 051061812265 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 1,077,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Էյ-Ի-Ջի-Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00930884) հետ 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված՝ N Կ 06-0584 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում՝ 21,864 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2018 թվականի հունիսի 28-ին կնքված՝ N 0227445 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 323,133 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 7-188-0-0-40 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 142,516 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2021 թվականի հունիսի 21-ին կնքված՝ N 018.06.21.0661/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 1,077,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Էյ-Ի-Ջի-Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00930884) հետ 2024 թվականի հունիսի 2-ին կնքված՝ N Կ 01-2143 պայմանագրում նշված

գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում՝ 23,377 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2020 թվականի հունիսի 26-ին կնքված՝ N 7020570 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 483,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2020 թվականի նոյեմբերի 18-ին կնքված՝ N 33-1091-0-23-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման ծառայությունների մատուցում՝ 142,516 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության («ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության) (ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 012.08.13.0661 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 1,197,935 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Էյ-Ի-Ջի-Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00930884) հետ 2024 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված՝ N Կ 01-0184 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման

ծառայությունների մատուցում՝ 21,866 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2021 թվականի հունիսի 7-ին կնքված՝ N 7262051 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 483,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության) (ՀՎՀՀ՝ 02500052) հետ 2009 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 20/02.2009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայություն-ների մատուցում՝ 48,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2017 թվականի նոյեմբերի 25-ին կնքված՝ N 01-0017-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարար-ման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 184,342 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 02618043) հետ 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N AM-AS-24-108 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 15-ից մինչև 2025 թվականի մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում 2024 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003

թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ